



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՒ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄԱՏԵԱՆ ԹԵՍԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԸ
ՅԱՆՉՆԵՑ ՎԵՐ. ՊԱՐԳԵՒ ՏԱՐՎԳՃԵԱՆԻՆ**

Չորեքշաբթի, 8 Նոյեմբերի առաւօտուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ազգ. Առաջնորդարանի առժամեայ գրասենեակին մէջ, ընդունեց Յայ Աւետարանական Յամայնքի հոգեւոր Յովիլսերէն Վեր. Պարգեւ Տարագճեանը եւ անոր յանձնեց Սեծի Տան Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ա.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսի օրինութեան կոնդակը, շնորհուած՝ Յոգեւոր Յովիլին ծառայական գործունեութեան 50րդ տարեդարձին առիթով:

Ծանօթ է, որ Յայ Աւետ. Եկեղեցիներու Միութիւնը, 21 Յոկտեմբերին, յորելենական յատուկ հանդիսութեամբ մը նշեց Վեր. Պ. Տարագճեանի գործունեութեան յիսնամեակը: Իբրեւ Առաջնորդ Սրբազանին ներկայացուցիչը՝ Յոգշ. S. Պարգեւ Վրդ. Կիլիւմեան ներկայ եղած էր հանդիսութեան, ըլթերցած էր հայրապետական կոնդակը եւ փոխանցած՝ Առաջնորդ Սրբազանին շնորհաւորանքը:

Վեր. Պ. Տարագճեանին կ'ընկերանային Յայ Աւետ. Յամայնքի Յովիլսերու եւ ներկայացուցիչներու պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին Վեր. Յովսէի Մաթոսեան, Վեր. Ռան Թովմասեան, Տեարք Յակոբ Լուսարարեան, Աւետիս Տեմիրճեան եւ Զաւեն Խանճեան: Յանդիպումին ներկայ եղան Ազգ. Առաջնորդարանի Թրիստոնեական Դաստիարակութեան վարիչներ՝ Գերապ. S. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգշ. S. Պարգեւ Վրդ. Կիլիւմեան:

Առաջնորդ Սրբազանը անգամ մը եւս շնորհաւորեց բազմավաստակ հոգեւոր հովիւն ու կրթական մշակը, մաղթելով, որ բարձրեալ Աստուած անոր շնորհէ իր գործունեութիւնը ընդերկար շարունակելու եւ ծաւալելու առիթներ ու միջոցներ: Յորելեար Յովիլը, իր կարգին, իր շնորհակալական զգացումները փոխանցող նամակ մը յանձնեց Առաջնորդ Սրբազանին:

Յանդիպումը նաեւ առիթ եղաւ խորհրդակցելու մեր ժողովուրդը յուզող հարցերու մասին, որուց գծով միասնական գործակցութեան ասպարեզներ կը տարածուին զոյգ համայնքներուն միշեւ:

**PRELATE PRESENTS REV. BARKEV DARAKJIAN WITH A PONTIFICAL
ENCYCLICAL**

On the morning of Wednesday, November 8, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Rev. Barkev Darakjian, long time Pastor of the Armenian Evangelical Church, to the temporary Prelacy offices, where he presented him

with a Pontifical Encyclical by H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, in honor of his 50 years of service.

On October 21, the Armenian Evangelical Union honored Rev. Darakjian's 50 years of service with a special ceremony. Very Rev. Fr. Barthev Gulumian represented the Prelate at the event, where he read the text of the Encyclical and conveyed the Prelate's best wishes.

At the meeting, Rev. Darakjian was accompanied by a delegation of clergy and representatives from the Armenian Evangelical Union, namely Rev. Joe Matossian, Rev. Ron Tomassian, Mr. Hagop Lousararian, Mr. Avedis Demirjian, and Mr. Zaven Khanjian. Also present were Prelacy Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.

The Prelate once again congratulated Rev. Darakjian, wishing for God to grant him many more years of service. Rev. Darakjian then presented the Prelate with a letter of thanks.

The meeting was also an opportunity to discuss issues of concern to the Armenian people, and the efforts of both communities to alleviate these issues.